ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի 2024 թվականի փետրվարի 12-ի նիստին ներկայացված «Տեղական ինքնակառավարման մարմինների ավագանու անդամի կողմից հանրային ծառայության մասին ՀՀ օրենքով սահմանված իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում պաշտոն զբաղեցնելու անհամատեղելիության պահանջի» օրենսդրական կարգավորումների վերաբերյալ

2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած՝ «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք **(բացառությամբ համայնքի ավագանու անդամների)** և հանրային ծառայողները չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Համայնքի ավագանու անդամների այլ պաշտոններ զբաղեցնելու սահմանափակումները նկարագրված են «Տեղական ինքնակառավարման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքներում:

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համայնքի ավագանու անդամը չի կարող միաժամանակ զբաղեցնել որևէ պաշտոն աշխատակազմում և ղեկավար պաշտոն՝ համայնքային ենթակայության կազմակերպություններում, լինել համայնքի ղեկավար (բացառությամբ համամասնական ընտրակարգով ձևավորված ավագանու), համայնքի ղեկավարի պաշտոնակատար (բացառությամբ համամասնական ընտրակարգով ձևավորված ավագանու) կամ վարչական ղեկավար, աշխատել իրավապահ, ազգային անվտանգության և դատական մարմիններում:

Վերոնշյալ օրենքների միջև ավագանու անդամին ներկայացվող պաշտոնների համատեղման իրավակարգավորումները առաջ են բերում տարընթերցումներ և տարընկալումներ, որը գործնականում հանգեցնում է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց ու ծառայողների կողմից համայնքի ավագանու անդամների պաշտոնների զբաղեցման դեպքերի: Արդյունքում խաթարվում է հանրային պաշտոնյաների ու ծառայողների բարեվարքության համակարգը, և ձևավորվում են շահերի բախման, մասնավորապես՝ անհամատեղելիության պահանջների խախտման ճչացող հանգամանքներ: Բացի այդ, աղճատվում է իշխանության ապակենտրոնացման կոնցեպտը և տեղական ինքնակառավարման ինքնուրույնությունը, ինչը հանրության մոտ առաջ է բերում ավագանու ինստիտուտի հեղինակության, իսկ ավագանու անդամների, ինչպես նաև անհամատեղելի պաշտոններում գտնվող կառույցների պաշտոնյաների հանդեպ՝ վստահության կորուստի:

Առաջարկ

1. **Ելնելով վերոնշյալից առաջարկում ենք վերանայել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 31-ի 1-ին մասը ֆ վերաշարադրել՝ մինչֆ 2022 թվականի ապրիլի 1-ի դրությամբ գործող խմբագրմամբ: Միաժամանակ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հոդված 19-ի 1-ին մասը վերաշարադրել՝ սահմանելով, որ «համայնքի ավագանու անդամը չի կարող զբաղեցնել հանրային պաշտոն ֆ հանրային ծառայության պաշտոն, ինչպես նաֆ պաշտոն՝ համայնքային ենթակայության կազմակերպություններում» խմբագրությամբ:**

Համայնքի ավագանու մասով, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց ու ծառայողների իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, անհամատեղելիության պահանջի օրենսդրական կարգավորումը պայմանավորված է ավագանու ներկայիս կարգավիճակի՝ այն է ՏԻՄ-երում հասարակական հիմունքներով աշխատանքի կարգավիճակի հետ: Հենց նշված հանգամանքն էլ առաջ է բերում ավագանու կողմից հանրային պաշտոն զբաղեցնող անձանց ու ծառայողներին ներկայացվող բարեվարքության պահանջների՝ անհամատեղելիության և այլ սահմանափակումների, նվերների ընդունման արգելքի, նույնիսկ վարքագծի կանոնների պահանջների պահպանմանը հետևելու ոչ պարտադիրությանը:

Մասնավորապես, համայնքի ավագանու կողմից գույքի, եկամուտների, ծախսերի ու շահերի հայտարարագրման օրենսդրական կարգավորումը, գործնականում չի ծառայում իր նպատակին: Այն հիմնականում ապահովում է ավագանու բարեկեցության վիճակի հրապարակայնությունը՝ փարատելով հանրության հետաքրքրությունը: Մինչդեռ, գույքի, եկամուտների, ծախսերի ու շահերի հայտարարագրման հիմնական առաքելությունը՝ ապօրինի հարստացման առերևույթ ռիսկերի բացահայտումը, ավագանու կողմից հանրային պաշտոնյային ներկայացվող անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների կամ շահերի բախման հնարավոր խախտումների բացահայտման տեսանկյունից կիրառելի չէ:

Առաջարկ

2. **Հեռանկարում՝ տեղական ինքնակառավարման համակարգի բարեփոխման համատեքստում ֆ համայնքների խոշորացման պայմաններում տվյալ հարցի սկզբունքային լուծման համար առաջարկում ենք վերանայել ավագանու ինստիտուտի լիազորությունները ֆ փոփոխել կարգավիճակը՝ ավագանու անդամներին դիտարկելով որպես լիարժեք քաղաքական պաշտոն զբաղեցնող պաշտոնյաներ՝ ապահովելով վարձատրությամբ ֆ, միգուցե, գործունեության անձեռնմխելիության որոշակի պայմաններով: Միայն նշված պայմաններում, հնարավոր կլինի ապահովել ավագանու անդամների կողմից բարեվարքության համակարգի պահանջների լիարժեք իրականացումը:**